

Ա. ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԵՐԷՅ ՎԱՆԵՅԻ

ԳՐԻԳՈՐ ԵՐԷՅ ՎԱՆԵՅԻ ԺԷ ՂԱՐՈՒ ՀԱՅ կարող մանրանկարիչ մըն է, որուն մասին կը համարիմ որ ցարդ չէ գրուած այլուր:

ԺՁ և ԺԷ ՂԱՐՈՒ, մանաւանդ առաջնոյն երկրորդ մասէն սկսելով մինչեւ երկրորդի առաջին մասը Հայաստանի քաղաքական դրութեան անտանելի պայմաններուն պատճառաւ հայ արուեստը և հայ արհեստը որակի և քանակի տարապայման նուազման ենթարկուած էին: Մահմետական տիրապետութեանց հայահալած և քրիստոնէական քաղաքականութիւնը, բռնագաղթներու, արտագաղթներու, բռնի կրօնափոխութեանց և մասնակի կամ ընդհանուր կոտորածներու, հալածանքներու ինչպէս նաեւ նիւթական կողոպուտներու և աւերածներու պատճառաւ Հայկական կամ Հայաստանի մշակոյթները ուժասպառ, գրեթէ մահամերձ եղած էին:

Այնուհանդերձ հոս ու հոն դեռ հերոսական փորձեր կ'ըլլային ապրումի, կեանքի գոյութեան նշոյլներ ցոյց տալու, ճիշդ գեր' որոնք ոչ թէ չոր ու ցամաք գնահատութեանց արժանի են, այլ իրական և մանրամասն ուսումնասիրութեան: Իմ ըրածս հոս միայն նախնական փորձ մըն է Հայ մշակոյթով հետաքրքրուողներուն ներկայացնելու մին ԺԷ ՂԱՐՈՒ կարեւոր ու անկարելի մանրանկարիչներէն, այն ալ միայն իմ անձնական համեստ ձեռագրաց հաւաքածոյի մէկ ձեռագրէն, որուն ծաղկոյն եղած է Գրիգոր Երէց Վանեցի:

Նախ կը ներկայացնեմ ձեռագիր հատորի նկարագրութիւնը: Զեռագիրը հաւաքածոյի մաս կազմեց 1931ին: Բարեկարգ կ'ըսենք թանկագին բարեկամս՝ Պր. Հայկ Պէրպէրեան ինծի համար ձեռք բերաւ չնչին գնով մը, որուն համար հոս

սրտագին շնորհակալութիւններ յայտնել պարտք կը սեպեմ:

Զեռագրի սկիզբի մասը Սաղմոս, իսկ Բ. մասը Նարեկ՝ ծաղկաքաղ: Ընդ աւելն 373 րէրք, առանց մագաղաթեայ պահպանակի: Մեծութիւն 4×5, 1/2 ինչէզ: Նիւրը՝ թուղթ ոչ տեղական այլ ներածուած, ջրագիծ վաճառանիշով: Գրութիւնը միասին, կարմիրով եռագիծ շրջանակուած, 19 տող, կանոնաւոր բոլորգիր, սեւ մեկնով. խորագրերէն և առաջին տողերէն ու գլխագրերէն ոմանք կարմիրով, կապոյտով ու երբեմն ոսկիով: Հանգամանքը կատարեալ: Կազմը քանդակեալ կաշեկազմ, տախտակ, ներսէն միագոյն կանաչ - դեղին քափքայով (մետաքս լաթ) պատած: Կազմը ունի փակիչներ, երեք հատ, որոնցմէ միայն երկու ծայրիները կը մնան իրենց արծաթ օղակներով և ճարմանդներով. մէջտեղինը կը պակսի:

Զեռագրի յիշատակաւորմաները.

Ա. — էջ 30ր ստացողին գրչէն. «Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք, Տէր Աւետիս կրօնաւորին, և մեղաց թողութիւն հայեցէք իւրն... և իւր ծնողացն, և ամենայն արեանառու մերձաւորաց իւրոց: Որ եղ յիշատակ զսուրբ սաղմոսարանս ի յանապատն Լմայ ի դուն սրբոյն Գէորգեայ զօրավարին, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց: Որ ոք նենգութեամբ կամ խեթիւ հեռացուցանէ զսա ի զրանէ սրբոյն Գէորգեայ կամ ծախէ կամ զրաւէ և կամ զողանայ՝ զանէ՛մ կայենի եղբայրասպանին առցէ. և զպատիժն զմատնիչն Յուդայի և զխաչահանուացն: Այլ լաւ պահողն և խնամ տարողն օրհնի յԱստուծոյ. և յամենայն սրբոց նորա ամէն. և եղիցի եղիցի»:

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք տէր Գալուստ կրօնաւորին, և» (կ'երեւի որ յիշատակարանս պիտի շարունակուէր էջ 31ա և 31բ-ի վրայ՝ որոնք պարապ կը մնան):

Բ. — էջ 58ա գրչէն. «Ո՞վ հոգեւոր հայրք և եղբարք. յորժամ ընթեռնուք զսաղմոսս Դաւթեան, յիշեցէք ի սուրբ և ի մաքուր յաղօթս ձեր և Աստուած ողորմի ասացէք Ապարանցի Սիմէոն վարդապետի աշակերտ, սրբաւէր և մաքրամիտ Տէր Աւետիս կրօնաւորին և ծնողաց նորին, որ ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն»:

Գ. — 211բ գրչէն մանրատառ. «Որք հանդիպիք սմա զտառապեալ զԽալիֆայ ծրոզս յիշեալիք: Ռձ և ԼԵ (1686) թուին գրեցաւ»:

Դ. — 283բ ամբողջ էջին վրայ նկար մը (աստ թիւ 1) որուն տակ ծաղկողին գրչէն. «ԶԳրիգորիկ ծաղկողս յիշեա, վըստահ արա քեզ թամաշայ»:

Ե. — 368ա գլխաւոր յիշատակարան իր գրչէն¹. «Փառք Հօր ամենակալի, և Որդւոյ միածնի, և Սուրբ Հոգւոյն ճշմարտի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: Որ ետ կարողութիւն տկար, անիմաստ և անարհեստ մեղապարտ սուտ անուն Խալիֆայի. հասանել յաւարտ և ի կատարած՝ այսմ մատենիս որ կոչի Սաղմոս Դաւթի՝ և երգ Հոգւոյն Սրբոյ: Ի խնդրոյ սրբաւորէր և մաքրամիտ Ապարանցի Սիմէոն վարդապետի աշակերտ Տէր Աւետիս կրաւորի ի յերկրին Վասպուրականի. ի քաղաքին Վանայ. ընդ հովանեաւ սրբոյն Վարդանայ զօրավարին: Այլ և ի հայրապետութեան աթոռոյն Էջմիածնայ՝ տեառն Եղիազարի՝ ամենայն Հայոց: Եւ առաջ նորդութեան սուրբ ուխտին Վարազայ՝ կարապետ վարդապետին: Եւ թագաւորութեան ազգին Հազարացոց՝ նոր ընծայ սուլթան Սուլէյմանին: Եւ ի թվականութեան մերում. ՌձԼԷ (1688) ամին. և Հոռվմայեցւոց ամսոյն՝ Սեպտեմբերի երեքին. ի դառն և ի նեղ ժամանակիս. որ

այսմ ամի՝ կարի յոյժ սղութիւն եղեւ հացի. զի քիչն մինչեւ ի հինգ և ի վեց զուռուշ եղեւ: Այլ և տղայոց մահտարածամ: Եւ անօրինաց նեղութիւն՝ և հարկապահանջութիւն յոյժ բազում ի վերայ



Մանրանկար Գրիգոր Երէց Վանեցիի

քրիստոնէից, բայց փառք մարդասիրին, կամք Տեառն օրհնեալ, շնորհողին գոհութիւն: Արդ՝ որք հանդիպիք սմա. յիշեցէք ի սուրբ և ի մաքուր յաղօթս ձեր. և Աստուած ողորմի ասացէք՝ Ապարանցի Սիմէոն վարդապետի աշակերտ սրբաւորէր և մաքրամիտ Տէր Աւետիս կրօնաւորին, և ծնողաց նորին, և ամենայն ազգականաց, մեծամեծաց և փոքունց առ հասարակ ամենեցուն. որ յոյժ կարի ջերմեանդ սիրով, և յօժար փափաք հաւատով ետ զսաղմոսս Դաւթի գրել, ի լաւ

1. Նորագոյն գրչէ մանուշակագոյն մեկնով նորագիր «Կրկին յիշատակարանները ընդօրինակեցի 1906 Յուլիս 13 Օ. Բարազամ»:

և ստոյգ օրինակէ. յառաջարկութեամբ և խորագրութեամբ: Այլ և յաղթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն՝ արարեալ ծաղկաքաղ՝ և ետ գրել վասն աղօթից և արտասուած թոր պաղատանաց՝ միանձու եղբարց և պայծառ դեղօք ծաղկել և զարգարել. և հաւաքեաց ի մի տուփ. և եղ ի դուռն ծովապատ սուրբ Գէորգ Լմայ անապատին, յիշատակ անջինջ հոգոյ իւրոյ և ծնողացն և ամենայն ազգականացն: Լի բերանով Աստուած ողորմի ասացէք իւրոյ հոգւոյն, և Աստուած ասացողացդ ողորմեսցի յիւր միւս անգամ (վէց տող պատարաս յետոյ դարձեալ իր գրչեմ) — Արդ՝ և ես տկարս և անիմաստ. թափուրս ամենայն բարեաց. մեղապարտ սուտ անուն խալիֆայ գրիչս. երես անկեալ աղաչեմ զձեզ. որք հանդիպիք սմա ներեցէք և թողութիւն շնորհեցէք սխալանաց գրիս. քան զի կարն մեր այս է, այլ և Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միւս անգամ գալստեանն ամէն»:

2. — Էջ 370-ա ծաղկոյից գրչէն, «Դարձեալ ի թվականիս Հայոց ՌՃԽ (1691). ամին, ես վանեցի Գրիգոր երէցս սուրբ Պօղոսեցի ծաղկեցի ոսկով զսաղմոսարանս հանդերձ Նարեկաւ. քան զի ծաղկեալ էր յառաջագոյն՝ առանց ոսկոյ խստապինդ ղեղագործութեամբ. այժմս վասն փափաքանաց Տէր Աւետիս կրօնաւորին ոսկեցի և կրկին ղեղօք նկարեցի. բայց կարի դժուար էր վասն բ. պատճառի, մին կազմած էր և միւս այլ ղեղագծեալ էր կապն զձեռս ոչ թողոյր խաղայր. և ղեղն զոսկին կլանէր, և ես բազում աշխատութեան աշխատանք ոսկեցի. թէ լաւ թէ վատ աւարտեցի. եթէ գտանիցէք ի սմա ինչ վայելչութիւն՝ Տեառն շնորհք, և թէ ոչ մի մեղադրէք. զի բազում տեղիս՝ առաջին նկարեալ ղեղն ոչ թողոյր որ քայլէր եաշմն, այլ կուրացուցանէր զոսկին. եթէ կամիք և արժանի համարիք՝ ասացէք Աստուած ողորմի և թէ ոչ՝ ողջ լեւուր ի տէր ամէն»:

Է. — 374-ը ագէտ նոտրգիր գրչէ մը,

«Քիւլայ ցորեան՝ հարկը դուրուշ այժմ կու գրենմը, նեղ և անձուկ ճանապարհաւ տուն կու դարենմը: Դու ե շուրուշ հաց առնելով կու դրդրաս, իրբեւ ըզհաւ ձում ածելով կու կըռկուս: Ել տես այսօր ըզկիրս մեր անտանելի. թէ ոչ տէրն էր մեզ օգնեալ՝ չէր գտնալի»:

Անդ, քիչ մը տարբերող մեղանով, կըրնայ վերինին շարունակութիւնն ալ սեպուիլ: «Ես մեղաւոր Գրիգոր անուն իբր վարդապետ՝ որ լուսարար եւս անուանիմ (սկզբնականի շառ մը) գրեցի զայս ձեզ թուին Ռ. վաթսուն և՛ երեք և երկերիւր՝ ի նոյն հաշիւ գիտել պարտիք (1814)»:

Ահա ասոնք են ձեռագրիս յիշատակաւ րանները: Ասոնցմէ կը ծանօթանանք Գրիչ խալիֆայ վանեցւոյն, որ ձեռագիրս գրած է. իսկ երկու ծաղկոյներէն մէկուն անունը անծանօթ կը մնայ, իսկ երկրորդինը իր ինքնագիր յիշատակարանին շնորհիւ յայտնի է. Գրիգոր երէց վանեցի:

Նախ երկու տողով կենսագրեմ գրիչը, որ արդիւնաւոր եղած է, մեզի թողով ծանօթ չորս տարբեր ձեռագիրներ:

Խալիֆայ Գրիչ վանեցի.

Իրմէ ձառած են Ձեռագիրներ, որոնցմէ երկուքը ինծի ծանօթ են: Ա. Սաղմոսարան մը, որուն յիշատակարանը, «Արդ գրեցաւ սա ՌՃԼԲ (= 1683) թվականիս ի վանքաղարի, ի դրունս սուրբ վարդան զօրավարի, ձեռամբ մեղապարտ խալիֆայի, և որք հանդիպիք սմա օգտութեամբ յիշեցէք ի միտս բարիս և ի հայցուածս զմեղաւոր սուտանուն խալիֆա գրիչս և զձնողքն իմ»:

Իսկ Բ. ձեռագիրը Աւետարան մը՝ որուն յիշատակարանը այս է. «Փառք և պատիւ... Արդ, գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս յերկիրն վասպուրական. որ այլ իմն ասի վանքնդ հովանեաւ սուրբ վարդան զօրավարին (և) զստերն իւրոյ Շուշանայ. ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնայ՝ տեառն Եղիազարին. և առաջնորդութեան սրբոյ ուխտին վարդապայ՝ կարապետ վարդապետին, և թագաւորութեան իսմայէ-

լացոյց՝ սուլթան Մահմուտին. և թուականութեանս հայկազեան սեռի ՌՃԼԶ (= 1687), ձեռամբ անարուեստ գրչի, մեղաւոր և անարժան տրուպ խալիֆայի»:

Այս երեք յիշատակարաններն ալ խալիֆայ գրչին մասին կարեւոր տարբերութիւն մը չունին, կը կրկնեն նոյնը որմէ յայտնի կ'ըլլայ որ խալիֆայ գրիչը վանայ Ս. վարդանի հովանաւորութեան տակ 1683էն սկսեալ մինչեւ 1688 գոնէ ձեռագիրներ գրելու զբաղած էր, որոնցմէ երեք հատին ծանօթացանք:

Հոս գրիչը չէ որ մեզ կը հետաքրքրէ, այլ ծաղկողը իմ ձեռագրիս՝ Գրիգոր երէց վանեցին: 1683ին խալիֆայի Սաղմոսարանը ծաղկուած է, ունի մանրանկար մ'ալ Դաւիթ², սակայն ծաղկողի մասին յիշատակութիւն չկայ, որով այս մանրանկարին երբ և որմէ՝ ծաղկուած ըլլալն ալ յայտնի չէ: Դժբախտաբար ծաղկման մասին մանրամասնութիւններ կը պակսին ցուցակին մէջ, այսու հանդերձ միայն մակրակարը նկատի առնելով՝ կը յանդգնիմ ենթադրել որ ծաղկողը եղած է մանրանկարիչ Գրիգոր երէց վանեցին: Խալիֆայ գրչի 1687էն գրուած Աւետարանը սակայն յայտնի չէ որ ծաղկուած էր թէ ոչ. ցուցակը այդ մասին ոչինչ կ'ըսէ: Ուրեմն խալիֆայ գրչի այս աշխատութիւնը մէկզի կը թողունք:

Գրիգոր երէցի ծաղկած և խալիֆայ գրչի գրած իմ ձեռագրիս նոյն իսկ Գրիգոր երէցի յիշատակարանին համաձայն 1687ին գրչութեան տունն իսկ անգամ մը ծաղկուած էր անյաջող կամ գոնէ ոչ այնքան լաւ կերպով, ինչպէս որ Գրիգոր երէց ծաղկեց երեք տարի վերջ 1691ին: Գիրքը կազմուած էր արդէն, բան մը որ դժուարութեան մատնեց Գրիգոր երէցը ծաղկման տունն, և որուն համար ան կը գանգատի իր ինքնագիր յիշատակարանին մէջ: Բայց մեր մանրանկարիչին զխաւոր գանգատը նախորդ ծաղկման դէմ է որ իրեն արհեստին լիուլի կիրարկման արգելք կ'ըլլար, զի ղեղն գոսկի կ'առնէր, և հազիւ շարժւում աշխատանք ոսկել կրնայ:

Սակայն Գրիգոր երէց այս դժուարութեան բախեցաւ միայն լուսանցազարդութեան և զխաղերուն տունն: Մանրանկարները և խորանները որոնք ուսումնասիրութեանս առընթեր հրատարակուած են, միայն կազմին պատճառաւ նեղութեամբ



Դաւիթ մարգարէ

յառաջ եկան: Նախորդ նկարիչը մանրանկարիչ մը չէր և նոյն իսկ խորանազարդելու յանդգնութիւնն ու ճարտարութիւնը չունէր, որով ատոնք չէին ղեղուած, զարդարուած, գծուած, և բնականաբար Գրիգոր երէց ատոնց պատրաստութեան մէջ չէր նեղուեր ինչպէս լուսանցազարդերուն:

Արդ նկատի առնելով որ 1683ին խալիֆայ գրչի գրած Սաղմոսարանն ալ Դաւիթի նկարով, մանրանկարուած էր, կը համարձակիմ ենթադրել որ իմ ձեռագրիս առաջին և անծանօթ ծաղկողը չէր կրնար ծաղկած ըլլալ 1683ի այս ձեռագիրը, այլ զարձեալ Գրիգոր երէց մանրանկարիչը:

Այս առթիւ նկատելու ենք որ իւրաքանչիւր գրչավայր (երբեմն գրիչ) ունէր նաեւ իւրայատուկ ծաղկողը և մանրանկարիչը, և ըստ մեր ձեռքի տուեալներուն

1. Ցուցակ Հայերէն Ձեռագրաց վասպուրականի. Ե. Լաւանս. Ա. մաս 1915. Թիֆլիզ. էջ 969.
2. Անդ էջ 50.

Գրիգոր Երէց պէտք է նկատուի ծաղկող մանրանկարիչը Ս. Վարդանի հովանոյն տակ գրուող ձեռագրաց:

Դարձեալ ուրիշ ձեռագիր մը, «Սաղմոսարան և Նարեկի մի մաս ժիթ», Լիմ Սնապատ. Հին թիւ 331. ՌՃԼԷ=1688: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ կաշեպատ: Հանգամանք՝ լաւ պահուած: Մագ. Պահպ. չունի: Դատարկ թուղթ՝ չունի: Մեծութիւն՝ 10×14 : Գրութիւն՝ միասին և երկսին: Թուղթը՝ 372: Տողը՝ 19 և 21: Գիր՝ բոլորգիր: Սկզբնատառը՝ գունաւոր ծաղկներ: Լուսանցազարդը՝ չունի: Մանրանկարը՝ Նարեկացու մի ոսկեգօծ պատկեր: Կիսախորանը 9: Գրիչ խալիֆա: Ստացող՝ Սեփիա կրօնաւոր: Ծաղկող՝ Գրիգոր երէց Վանեցի: Կազմող՝ անյայտ: Ժամանակ՝ ՌՃԼԷ=1688: Տեղի՝ Վան: Յիշատակարան չունի¹:

Ըստ իս վերի ցուցակագրեալ նոյն այս ձեռագիրն է որ այժմ իմ հաւաքածոյիս մաս կը կազմէ: Թէեւ ցուցակագրութեան համաձայն յիշատակարան պէտք չէ ըլլայ, սակայն հետաքրքրական է իմանալ թէ ուր կէ՞ արգեօք ցուցակագիրը ստացած է ձեռագրիս գրչին, ստացողին, ծաղկողին, ժամանակին և տեղւոյն մասին այդ իր տուած տեղեկութիւնները: Ուրեմն անտարակոյս ձեռագիրը ունէր յիշատակարաններ, որոնք ցուցակին հրատարակութեան պակսեր են որեւէ պատճառաւ: Թէեւ նկարներուն՝ որոնք ոչ միայն մէկ այլ երկու հատ են, լուսանցազարդերու, որոնցմէ բազմաթիւ կան, և ուրիշ մանրամասնութեանց մասին ցուցակագիրը բոլորովին կը տարբերի ձեռագրէն, սակայն ատիկա ցուցակագրին աճապարանքին, ցուցակագրուած նիւթերուն խառնումին և ուրիշ պարագաններու կը վերագրեմ, և հուսկ կը նոյնացընեմ իմ ձեռագրիս վերոյիշեալ ցուցակագրութեան ձեռագրին հետ: Այս նոյնացումը ապացուցանելու ուրիշ փաստ մըն ալ սա է որ՝ վերոյիշեալ ձեռագրիս կոնակը փակցուած է ճերմակ թղթեայ պիտակ մը մասամբ պատռած ուր կ'երեւի սկզբնական թիւ 3 մը, յետոյ պատռած պիտա-

կին պատճառաւ երկրորդ երեքի մը ստորին պոչը, և հուսկ որոշ թիւ մէկ մը, այսպէս տալով թիւ 331, որ ցուցակագրին Լիմ անապատ հին 331ին կը համապատասխանէ. թող որ ձեռագրիս Լիմ անապատին պատկանելու յիշատակարանի ալ հանդիպեցանք ձեռագրիս յիշատակարաններուն կարգին:

Հարկ է ըսեմ թէ արուեստի տեսակէտով Գրիգոր Երէցի մանրանկարներն ու ծաղկունները իրապէս նոր ձեւ մը չեն, սակայն անոնք կու գան ցոյց տալ որ Վանի մէջ դեռ բազմաշխատ մանրանկարներ պատրաստելու ճաշակն ու արուեստը կար: Հայ ուսումնասիրութեանց ծանօթ են Վանեան ինչ ինչ ծաղկողական և մանրանկարչական դարոցներ, որոնց մասին վերջնական ուսումնասիրութիւններ սակայն դեռ պատրաստուած չըլլալով՝ դժուար է ինծի հոս ամփոփում մը տալ: Սա յայտնի է որ գոնէ Ժի դարուն թէ՛ ծաղկումը և թէ՛ մանրանկարչութիւնը ազդուած են ուրիշ արուեստներէ: Գրիգոր Երէց կը սիրէ ոսկուած, գունաւորուած և այսպէս ծանրաբերնուած արուեստը: Ժի դարուն Պոլսէն սկսեալ մինչեւ Երուսաղէմ, և Կովկաս ու Պարսկաստան հայ մանրանկարչութիւնը և ծաղկումը իր արհեստին մէջ շատ կը նմանի կիտուածման արուեստածելին, գոյները որոշ իրարու մօտ շարուած, մաքուր բաժանումներով, ոսկին՝ ճոխութեան նշանը՝ տարապայման կերպով տիրապետող: Հոն կը պակսի արուեստի թեթեւութիւն, փոխանակ ատոր՝ կայ գծերու կազմութեան, գոյներու դասաւորման և տեղաւորման, ոսկելու ճշդ ծանրութիւնը որ դժբախտաբար կը խլէ շնորհը թէ մանրանկարներէն և թէ ծաղկուններէն: Ծաղիկները հաստ են և կարծր, շարժումները թէեւ բնական՝ սակայն սառած, ահա այս է մեր Ժի դարու տիրապետող արուեստը: Գրիգոր երէցէ առաջ ձեռագրիս ծաղկող անծանօթ արուեստագէտը կը տարբերի Գրիգոր երէցէն, ըլլա-

1. Աճ 50.

լով աւելի թեթեւ իր գծերուն և գոյներուն մէջ, թէեւ ան ալ գոյներու ճաշակին մէջ տկար է, ասկէ զատ լուսանցազարդերը որ իր են՝ ոչ մէկ նորութիւն ունին:

Եւ Սակայն Գրիգոր երէց հասարակ մանրանկարիչ մը և ծաղկող մը նկատուելու չէ, այլ մէկը որ երկար ժամանակ սորված է իր արուեստը և ժամանակին ճաշակը իւրացուցած մասնաւոր կերպով անոր հետամուտ ըլլալով: Իր երկու մանրանկարները՝ որոնց արտատպութիւն տրւին հոս՝ մանաւանդ թիւ 1ը՝ արտայայտիչ են: Ունոնք ապրող, շնչող իսկական տիպեր են: Եւ եթէ նոյն իսկ հաստատուի որ անոնք իր յղացումները չեն, սակայն այդ կերպաւորումներուն իր կողմէ զատուած և գործածուած ըլլալն անգամ

զրաւական մըն է իր արուեստական հմտութեան: Որովհետեւ վերջապէս ինչ որ ալ ըլլայ Գրիգոր Երէց մեզի կը կտակէ արուեստի ձեւ մը որ օղակ մըն է մեր արուեստի պատմութեան շղթային համար:

Իսկ Գրիգոր երէցի յիշատակարանը ցոյց կու տայ որ միայն մագաղաթեայ կրկնագիրներ չկան, այլ կան նաեւ մանրանկարչական «կրկնագիրներ»: Ծանօթ էին վերակերտական փորձեր զանազան հին ձեռագիրներու ծաղկուններուն վրայ, սակայն հազիւ երեք տարի առաջ ծաղկուած ձեռագիր մը դարձեալ ծաղկելու մանրանկարելու այս փորձը՝ հաւանականութիւն մը, ծանօթութիւն մը եւս կ'աւելցնէ մեր մանրանկարչական մութ պատմութեան համար:

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

ԼԵԶՈՒԱԿԱՆ

Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի Հ Ա Ր Ց Ե Ր

ՔՆՆԱԴԱՏՆԵՐՈՒՄ

Ի լոյս ընծայելով վերջին մասնագիտական երկարաշունչ աշխատութիւնս՝ Ողորդարար և առողսնորիս հայերեւի, փափաքեցայ և կարծեցի լաւագոյն բաներն ըսել մեր լեզուի կարեւորագոյն և անլոյժ կամ անծանօթ մնացած խնդրոց մասին: Առանձինն ու հայ մամուլին մէջ բանիմաց անձանց կողմանէ յայտնուած տեսութիւնք համոզեցին զիս՝ թէ նպատակիս հասած էի: Ճշմարիտ բանասիրին հաճելի է անշուշտ՝ գնահատութեանց հետ լսել իւր գործին թերութիւնքն ալ, որոյ մէջ իսկ է յառաջագիմութիւնը: Սակայն ես զըժբախտութիւնն ունիմ հանդիպելու յաճախ այնպիսի դատաւորաց, որոց հանդէպ կը ստիպուիմ փոխել դերս, և ես ինքնին դատաւոր կանգնիլ իրենց: Անոնց միոյն՝ որ երեւեցաւ Յռաւարի մէջ (1934, նոյ. 10, 17), արժանաւորագոյն պատասխանն համարեցայ լռութիւնը, որ ոմանց դէմ աւելի պերճախօս է քան զրիչը: Երկրոր-

դին՝ Սիւնի մէջ (1935, 220), որ աշխատութիւնս ի հիմանց տապալելու ելած էր, յետ ուշի ուշով կարգալու պատասխանեցի՝ թէ «կօշկակարը թող կօշկէն վեր չեկնէ» (ՔՐՄ. 1935, 229). համոզուեցաւ ու գնաց նստաւ կօշկին բով: Երրորդ դատաւոր մ'ունեցայ յանձին Խ. Քարտաշի, դարձեալ Սիւնի մէջ (1936, 220), բայց աւելի մեծանձն, — զայս կ'ըսեմ ի սէր արդարութեան, — որ գնահատելով գործս, շատացաւ սրբագրել անոր քանի մը տկար կամ սխալ կարծած կետերը: Ձիւս ընդ երկար կաշկանդող աշխատութիւնէ մ'ազատած, կու գամ այժմ պատասխանել իրեն և ուրիշներու:

Քարտաշ կը դիտէր՝ թէ «արժեքաւոր մասերուն բով ունիմ խորշիլի պնդումներ ալ, որոնք եթէ հասկնալի են ձեռնհասներուն, սակայն անմատչելի կամ զէթ խրտչելի են ժողովրդին, մանաւանդ աշակերտին»: Ընթերցողաց այս զանազա-